ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

10.01.2011թ. գ. Գեղարքունիք

ՈՐՈՇՈՒՄ N 1-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքում 2012թ.-ի անասնագլխաքանակի հաշվառում անցկացնելու համար

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ստեղծել համայնքում անասնագլխաքանակի հաշվառում անցկացնող հանձնաժողով՝ հետևյալ կազմով.
   Ս. Ավետիսյան – հանձնաժողովի նախագահ- համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար
   Մ. Գրիգորյան – հանձնաժողովի անդամ – համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ
   Ա. Առաքելյան – հանձնաժողովի անդամ – համայնքի ավագանու անդամ
   Մ. Ումրշատյան - հանձնաժողովի անդամ – համայնքի ավագանու անդամ:
   Հաշվառումը կատարել ըստ առանձին անասնատեսակների:
   Հաշվառումը կատարել ս/թ հունվարի 10-13-ը՝ ներառյալ:
   Հաշվառման արդյունքները ներկայացնել համայնքի ղեկավարին և ՀՀԱՎԾ Գեղարքունիքի մարզային կենտրոն՝ մինչև սույն թվականի հունվարի 17-ը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գեղարքունիք համայնքի ղեկավար՝ Կ. Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

24.01.2011թ. *գ. Գեղարքունիք*

ՈՐՈՇՈՒՄ N 2-Ա

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ նախագահի 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի1.6-րդ կետի, ՀՀ կառավարության 2011թ.-ի նոյեմբերի 10-ի թիվ 1582-Ն որոշման 3-րդ կետով, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2012թ. հունվարի 23-ի թիվ 15-Ա և 16-Ա որոշումներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ստեղծել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառով վնասը գնահատող մշտական գործող համայնքային հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Մ. Ոսկանյան – հանձնաժողովի նախագահ- համայնքի ղեկավարի տեղակալ
Գ. Աբրահամյան – հանձնաժողովի նախագահի տեղակալ – համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ
Է. Կարապետյան – հանձնաժողովի անդամ – համայնքի բուժկետի վարիչ
Թ. Գրիգորյան – հանձնաժողովի անդամ – համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ
Մ. Ումրշատյան - հանձնաժողովի անդամ – համայնքի ավագանու անդամ:

2. Հաստատել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառով վնասի գնահատման համայնքային հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2012թ.-ի հունվարի 23-ի թիվ 16-Ա որոշման հավելվածի:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գեղարքունիք համայնքի ղեկավար՝ *Կ. Ասատրյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

30.01.2011թ. գ. Գեղարքունիք

ՈՐՈՇՈՒՄ N 3-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և «Սոցիալական օգնության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Գեղարքունիք համայնքի նախկին բնակիչներ , հանգուցյալներ Միշա Հակոբի Գևորգյանի և Գառնիկ Սիսակի Մանուկյանի թաղման ծախսերը որոշ չափով փոխհատուցման համար տրամադրել ֆինանսական օգնություն՝ հետևյալ չափերով.
Գևորգյան Միշա Հ. – 25000(քսանհինգ հազար) դրամ, ստացող՝ աղջիկը – Հունանյան Դուխիկ Մ.
Մանուկյան Գառնիկ Ս. - 25000(քսանհինգ հազար) դրամ, ստացող՝ տղան – Մանուկյան Վարդան Գ.

2. Գեղարքունիք համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել ֆինանսական օգնություն՝ հետևյալ չափերով.
Ումրշատյան Խաչիկ Բ. – 20000 (քսան հազար) դրամ
Ջաքարյան Սլավիկ Ն. - 25000(քսանհինգ հազար) դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գեղարքունիք համայնքի ղեկավար՝ Կ. Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

30.01.2011թ. գ. Գեղարքունիք

ՈՐՈՇՈՒՄ N 4-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի դրույթներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

2012թ.-ի փետրվարի 3-ի «Հայաստանի Հանրապետություն» թերթում տալ հայտարարություն համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 59.3099 հա վարելահողերը աճուրդով օտարելու մասին՝ հետևյալ տեսքով.

«Հայտնում եմ, որ աճուրդով օտարվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը:

1. Գյուղատնտեսական նշանակության հողերից.

1.1 Վարելահող IV կարգ ջրովի 56 լոտով՝ ծածկագիր 101-160 0.8693հա, 101-161 0.9041հա, 101-145 0.5176հա, 101-162 0.6906հա, 101-163 0.7787հա, 101-165 0.7782հա, 101-166 0.6098հա, 101-167 0.7023հա, 101-168 0.7032հա, 101-169 0.9165հա, 101-170 1.1642հա, 101-171 0.6520հա, 101-172 0.9412հա, 101-174 1.1570հա, 101-175 1.0371հա, 101-176 0.8384հա, 102-004 0.9731հա, 102-005 0.6559հա, 103-005 1.0797հա, 104-133 0.7893հա, 104-134 0.6617հա, 104-135 0.7120հա, 104-137 0.6430հա, 104-138 0.6591հա, 104-139 0.9720հա, 104-140 1.0312հա, 120-005 0.6632հա, 120-006 0.8210հա, 120-007 0.7180հա, 120-008 0.18հա, 120-009 0.9326հա, 120-010 0.7977հա, 120-011 0.8808հա, 120-012 0.7141հա, 120-013 0.6806հա, 120-014 0.7834հա, 120-015 0.8785հա, 120-016 0.9158հա, 120-017 1.0499հա, 120-018 0.9284հա, 121-294 0.6411հա, 121-295 0.7422հա, 121-296 0.6374հա, 121-297 0.6723հա, 121-298 0.8566հա, 121-299 0.7249հա, 121-300 0.6212հա, 121-301 0.7414հա, 121-302 0.9534հա, 121-303 0.6949հա, 121-304 0.8518հա, 101-173 0.4720հա, 101-177 0.7675հա, 101-178 0.7825հա, 102-002 0.5644հա, 102-003 0.6828հա: 1 մ^2 հողամասի մեկնարկային գինը 34.0 դրամ:

1.2 Վարելահող III կարգ անջրդի 7 լոտով՝ 114-176 1.0493հա, 114-177 0.8830հա, 114-178 0.8196հա, 114-179 0.8237հա, 114-181 1.0561հա, 114-182 0.9355հա, 114-180 0.2405հա: 1 մ^2 հողամասի մեկնարկային գինը 36.0 դրամ:

1.3 *Վարելահող IV կարգ անջրտի 3 լոտով՝ 104-136 1.4970հա, 117-130 0.27հա, 117-137 0.1652հա: 1 մ^2 հողամասի մեկնարկային գինը 23.0 դրամ:*

1.4 *Վարելահող V կարգ անջրտի 8 լոտով՝ 114-101 1.6345հա, 114-174 1.0229հա, 114-078 0.4921հա, 114-092 1.0319հա, 114-175 0.6127հա, 114-074 0.9941հա, 114-073 1.3071հա, 114-107 0.6673հա: 1 մ^2 հողամասի մեկնարկային գինը 10.0 դրամ:*

Հողամասերը ապահովված են հաղորդակցման ուղիներով, հողամասերի նկատմամբ սահմանափակումներ (սերվիտուտներ) չկան:

Աճուրդը կայանալու է ս/թ մարտի 5 - ին ժամը 10.^{00} գյուղապետարանի շենքում: Հայտերն ընդունվում են մինչև ս/թ մարտի 2-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Գեղարքունիքի գյուղապետարան:»

Գեղարքունիք համայնքի ղեկավար՝ ***Կ. Ասատրյան***